ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«08» օգոստոս 2019թ. No 2175 - Ա

# ԲԵԼԱՌՈՒՍԻ «ՄԻՆՍԿԻՆՏԵՐԿԱՊՍ ՈՒ.Զ., 26/3, ԻՆԺԵՆԵՐՆԱՅԱ Փ., 220075, ՄԻՆՍԿ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ԱԼԼԵՐԿԱՊՍ, ՑԵՏԻՐԻԶԻՆ (ՑԵՏԻՐԻԶԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ԴԵՂԱՊԱՏԻՃՆԵՐ, 5ՄԳ; (20/2X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ», «ԱԼԼԵՐԿԱՊՍ, ՑԵՏԻՐԻԶԻՆ (ՑԵՏԻՐԻԶԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ԴԵՂԱՊԱՏԻՃՆԵՐ, 10ՄԳ; (20/2X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված N 1-ի 5-րդ կետի, համաձայն «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 02.08.2019 թվականի N 18695, N 18696 բացասական եզրակացությունները՝ «Ալլերկապս, ցետիրիզին (ցետիրիզինի հիդրոքլորիդ), դեղապատիճներ, 5մգ; (20/2x10/) բլիստերում», «Ալլերկապս, ցետիրիզին (ցետիրիզինի հիդրոքլորիդ), դեղապատիճներ, 10մգ; (20/2x10/) բլիստերում» դեղերի արդյունավետության և անվտանգության փորձաքննության արդյունքները՝ դեղերի օգուտ/վնաս հարաբերակցությունները գնահատվում են բացասական, քանի որ համաձայն N 6-1-3/933 առ 10.07.2019 գրության հայտատուն տեղեկացրել է, որ չի կարող ներկայացնել կենսահամարժեքության համապատասխան հետազոտություններ,

Ընդհանուր և արտաքին կապերի բաժին
№ 7578 08 AUG 2013 ժամ 17.40

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Բելառուսի «Մինսկինտերկապս ՈՒ.Զ., 26/3, Ինժեներնայա փ., 220075, Մինսկ» դեղագործական ընկերության արտադրության «Ալլերկապս, ցետիրիզին (ցետիրիզինի հիդրոքլորիդ), դեղապատիճներ, 5մգ; (20/2x10/) բլիստերում», «Ալլերկապս, ցետիրիզին (ցետիրիզինի հիդրոքլորիդ), դեղապատիճներ, 10մգ; (20/2x10/) բլիստերում» դեղերի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

08.08.19 ժ. 16$^{40}$

2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ առաքել հայտատուին:

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի հայտատուին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

/ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

08.08.2019

X

VERIFIED OCSP 08.08.2019 12:29:36 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157